


ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



ՍՈՒՍԱՆՆԱ ՉԱԼԱՔՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՐԻՆԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հայաստանում Ֆրանսիական քոլեջի դասախոս

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶԿԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածում ներկայացված են օտար լեզուների դասավանդման հին և նոր մեթոդները՝ քերականաթարգմանական, ուղիղ, տեսալսողական և այլն:

Հոդվածի նպատակն է առանձնացնել, նկարագրել, ուսումնասիրել, վերլուծել օտար լեզուների դասավանդման ավանդական և նորամուծական մեթոդները, ներկայացնել դրանց կիրառումը օտար լեզուների դասավանդման ընթացքում, ընդգծել դրանց առավելություններն ու թերությունները:

Հիմնաբառեր. քերականաթարգմանական մեթոդ, ուղիղ մեթոդ, նորարարական մեթոդ, ավանդական մեթոդ, հաղորդակցական մեթոդ

JEL: Y30, Y50, Y70, Z11

Օտար լեզուների ուսուցման պատմության մեջ «մեթոդ» հասկացությունն օգտագործվում է 2 տարբեր իմաստներով՝

ա) որպես մեթոդական համակարգ կամ ուղղություն (ընդհանուր իմաստով),

բ) որպես ուսուցման եղանակ (մասնավոր իմաստով):

Առաջին դեպքում խոսքը քերականաթարգմանական, ուղիղ, խառը և այլ մեթոդների մասին է: Երկրորդ դեպքում «մեթոդ» հասկացությունը հենվում է դիդակտիկայի տվյալների վրա:

Օտար լեզուների դասավանդման պատմության ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ փոփոխություններ լեզվի տեսության և դասավանդման մեջ: Քելլին և Հովատը կարծում են, որ լեզվի դասավանդման գործընթացում կիրառվող շատ մեթոդներ նորարարական չեն¹:

Հոդվածի նպատակն է առանձնացնել, նկարագրել, ուսումնասիրել, վերլուծել օտար լեզուների դասավանդման ավանդական և նորամուծական մեթոդները, ներկայացնել դրանց կիրառումը օտար լեզուների ուսուցման ընթացքում, ընդգծել դրանց առավելություններն ու թերությունները:

Քերականաթարգմանական մեթոդ (The grammar- translation method):

Այս մեթոդն ավանդական է և տարիներ ի վեր կիրառվում է օտար լեզու դասավանդողների կողմից: Տարբեր ժամանակներում նշված մեթոդն ունեցել է տարբեր անվանումներ, օրինակ՝ դասական, քանի որ օգտագործվել է լատիներենի և հունարենի դասավանդման ժամանակ, կիրառվել է նաև արտասահմանյան գրականության ընթերցման նպատակով:

Այժմ փորձենք ավելի մանրամասն անդրադառնալ քերականաթարգմանական մեթոդին՝ ներկայացնելով միջինից բարձր մակարդակ ունեցող լսարանի մի դաս:

Դասընթացին ներգրավված է 20 ուսանող: Ուսանողներն ընթերցում են դասագրքից մի հատված: Յուրաքանչյուրը կարդում է մի քանի տող և թարգմանում մայրենի լեզվով: Դասախոսն օգնում է յուրացնել նոր բառերը: Ընթերցանությունն ու թարգմանությունն ավարտելուց հետո դասախոսը տեքստի վերաբերյալ հարցեր է հղում ուսանողներին: Այնուհետև ուսանողներին տրվում է առաջադրանք՝ տեքստից դուրս գրված նոր բառերը փորձել թարգմանել:

Քերականաթարգմանական մեթոդն օգնում է ընթերցել և հասկանալ օտար լեզվով տեքստը, տարբեր առաջադրանքների միջոցով նոր բառեր և արտահայտություններ յուրացնել: Մեթոդի հիմքում արտածումն է (դեդուկցիա). դասախոսն ինքն է ներկայացնում նոր բառեր՝ այն էլ թարգմանության միջոցով, որն այդքան էլ ընդունելի չէ դասավանդման արդի գործընթացում, նաև բացատրում ու ներկայացնում է այս կամ այն քերականական կանոնը:

Ուղիղ մեթոդ (The Direct method): Այս մեթոդը ևս նոր չէ և տարիներ ի վեր օգտագործվում է դասախոսների կողմից:

Ուղիղ մեթոդը ենթադրում է դասավանդում՝ առանց թարգմանության: Այսինքն՝ այս կամ այն երևույթի իմաստը բացատրվում է ուղղակիորեն՝ ուսուցանվող լեզվի միջոցով: Դասի ընթացքում դասախոսը ուսանողներին հանձնարարում է ընթերցել տեքստից մի հատված: Ընթերցելուց հետո սովորողները հարցեր են տալիս անծանոթ բառերի վերաբերյալ: Դասախոսը պատասխանում է նրանց հարցերին՝ կիրառելով տարբեր հնարներ: Այսպես՝

- ներկայացնում է անծանոթ բառի նկարագրությունը գրատախտակին,
- օգտագործում է իրակություն (ռեալիա), այսինքն՝ արտահայտում է անծանոթ բառի իմաստը առարկայի կամ նկարների միջոցով,
- բառը գործածում է նախադասության կամ երկխոսության մեջ, որի շնորհիվ ուսանողները կարողանում են ուսուցանվող բառը կամ արտահայտությունը կիրառել լեզվական որոշակի իրադրության մեջ:

¹ Տե՛ս Kelly L. G., 25 Centuries of Language Teaching. Rowely, Mass: Newbury House, 1969: Howatt A. P. R., A History of English Language Teaching. Oxford: Oxford University press, 1984:

Ուղիղ մեթոդի ժամանակ քերականական երևույթներն ուսուցանվում են մակածման (ինդուկցիա) սկզբունքով, այսինքն՝ ուսանողները օրինակների միջոցով և հետագա վերլուծությամբ ինքնուրույն ձևակերպում են այս կամ այն քերականական կանոնը:

Ուղիղ մեթոդը ներկայումս բավական արդյունավետ և լայնորեն կիրառվում է ուսուցման գործընթացում: Դասավանդման մեր փորձը ցույց է տալիս, որ այդ մեթոդը, լինելով ուսանողակենտրոն, նպաստում է.

- հաղորդակցական հմտությունների զարգացմանը,
- վերլուծական մտածողության ձևավորմանը,
- դասախոս–ուսանող, ուսանող–ուսանող փոխգործուն (ինտերակտիվ) հարաբերությունների առկայությանը:

Դասի ընթացքում մայրենի լեզվի կիրառության բացառումը նպաստում է, որ ուսանողները աստիճանաբար սկսեն մտածել ուսուցանվող օտար լեզվով:

Տեսալսողական մեթոդ (The Audio-Lingual method): Համաձայն այս մեթոդի՝ դասի սկզբում դասախոսը երկխոսություն է ներկայացնում ուսանողներին՝ առնվազն 2 անգամ: Վերջիններս կրկնում են երկխոսության յուրաքանչյուր միավորը մի քանի անգամ: Այնուհետև նկարների, շարժումների, դիմախաղի միջոցով փորձում են դասախոսի օգնությամբ կրկնել երկխոսությունը: Դրանից հետո միայն ուսանողները զույգերով ներկայացնում են երկխոսությունը: Փաստորեն, տվյալ մեթոդով անցկացվող դասը հաղորդակցական հմտություններ է զարգացնում: Նոր բառերը ուսանողներին ներկայացվում են երկխոսության միջոցով, որը բավական արդյունավետ է, քանի որ որոշակի իրադրության մեջ նոր բառերի կրկնության միջոցով տեղի է ունենում բառապաշարի հարստացում և ավելի խոր յուրացում: Այս մեթոդի օգտագործումը նպատակահարմար չէ քերականական երևույթներ ուսումնասիրելիս, քանի որ դրանք պարզապես ներկայացվում են երկխոսության մեջ՝ առանց հետագա ամրապնդման: Տեսալսողական մեթոդը նորարարական է և կիրառելի, երբ պետք է զարգացնել ուսանողի հատկապես խոսակցական-հաղորդակցական հմտությունները:

Դասավանդման «լուռ» մեթոդ (The Silent Way method): Մեթոդը համեմատաբար նոր է և, հավանաբար, շատերին՝ անծանոթ: Այս մեթոդով անցկացվող դասի ընթացքում դասավանդողը, ընդհանուր առմամբ, լուռ է մնում, նոր նյութը ներկայացնելու համար կիրառվում են դիդակտիկ նյութեր, դիմախաղ և ժեստեր: Մեթոդը օգնում է ուսանողներին՝ դառնալու ավելի անկախ՝ հույսը դնելով միայն սեփական ուժերի վրա, քանզի ինքնուրույն պետք է ուղղեն իրենց սխալները: Դասախոսն էլ, իր հերթին, հանձնարարում է այնպիսի առաջադրանք, որը մասամբ ծանոթ է ուսանողներին, երբեմն էլ, անհրաժեշտության դեպքում, օգնում է նրանց: Ժամանակ առ ժամանակ դասախոսը միջամտում է դասի ընթացքին՝ ստեղծելով այնպիսի իրավիճակ, որը կնպաստի նյութի ճիշտ ընկալմանը: Նա ուշադիր հետևում է ուսանողների խոսքին, իսկ վերջում լուռ է նրանց արձագանքը՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի կարծիքը և օգնում է հաղթահարել ներկայացված նյութի լեզվական դժվարությունները:

Այդպիսի դասի ընթացքում ուսանողներն ակտիվորեն են շփվում միմյանց հետ, դասը դարձնում է համագործակցային: Մեր կարծիքով՝ մեթոդի կիրառումը արդյունավետ է հատկապես ստեղծագործական աշխատանք-

ների (կապակցված խոսք, շնորհանդեսներ) ներկայացնելու դեպքում: Սակայն այն չի կարող հաճախ կիրառվել, քանի որ նպատակահարմար չէ լեզվի բոլոր շերտերի ուսուցման համար:

Սուգեստոպեդիա (Suggestopedia): Մեթոդի հիմնադիրը՝ Գեորգի Լոզանովը, կարծում է, որ օտար լեզու սովորելու գործընթացը կարող է ավելի կարճ տևել: Ըստ նրա՝ լեզու սովորելու ընթացքում մենք հոգեբանական պատնեշներ ենք ստեղծում մեզ համար և լիովին չենք օգտագործում մեր մտավոր կարողությունները: Սեփական ներուժը լիովին օգտագործելու համար հարկավոր է վերացնել այդ պատնեշները: Այս մեթոդի օգնությամբ կարելի է ուսանողներին օգնել, որ օտար լեզվով արտահայտեն իրենց մտքերն ու զգացումները: Նշված մեթոդով անցկացված դասը բավական ինքնատիպ է:

1. Սովորողները նստած են բազկաթոռներին, հնչում է մեղմ երաժշտություն, մթնոլորտը խաղաղ է ու հանգստացնող:
2. Սենյակում կան քերականական նյութեր ներկայացնող պաստառներ, ինչի շնորհիվ ուսանողները, եթե նույնիսկ հատուկ ուշադրություն չեն դարձնում դրանց, այնուամենայնիվ, սովորում և յուրացնում են տվյալ կանոնը:
3. Դասավանդողը պարբերաբար ընդգծում է, որ ուսուցանվող լեզուն սովորելը հեշտ է ու հաճելի:
4. Դասի ընթացքում դասախոսն առաջարկում է ուսանողներին միասին երևակայական ճանապարհորդություն կատարել, ինչը նպաստում է նյութի ընկալմանը: Այս մեթոդը օգնում է սովորողներին հաղթահարել հոգեբանական պատնեշը՝ կապված սխալվելու մտավախության հետ: Սուգեստոպեդիայի մեթոդը ուսանողներին վստահություն է ներշնչում:

Ֆիզիկական պատասխանի մեթոդ (The total physical response method):

Ի տարբերություն նախորդ մեթոդների, որտեղ շեշտը դրվում է հիմնականում հաղորդակցական հմտությունների զարգացման վրա, այս մեթոդի հիմքում լսողական հմտությունների ձևավորումն և ամրապնդումն է: Մեթոդի կիրառումը կարելի է համենատեղ նոր խոսել սովորող երեխայի վարքագծի հետ, երբ նա, առանց հասկանալու, սկսում է կրկնել մեծերի ասածը: Դասի ընթացքում դասախոսը հրահանգում է՝ «Stand up» (կանգնեք) և իր օրինակով հուշում է ուսանողներին՝ կանգնել: Նույն մոտեցմամբ ներկայացվում են այլ բառեր և բառակապակցություններ: Դասի վերջում դասավանդողը նոր բառերը և բառակապակցությունները գրում է գրատախտակին, իսկ սովորողներն արտագրում են իրենց տետրերում: Մեթոդի նպատակն է օտար լեզուն սովորեցնել ունկնդրելու հիման վրա: Այս ճանապարհով զարգացնում են սովորողների հաղորդակցական հմտությունները: Դասախոսը հանդես է գալիս որպես օրինակ, իսկ աշակերտները նմանակում են նրան:

Այս մեթոդն ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ: Այսպես՝ նվազեցնում է սովորողի լարվածությունը դասի ընթացքում, ուսանողը սկսում է խոսել, երբ պատրաստ է համարում իրեն, դասն առավել հետաքրքիր է ընթանում:

Սակայն դասն անցնում է դասախոսակենտրոն մոտեցմամբ, դասախոսը որպես օրինակ է ծառայում, իսկ ուսանողները կրկնօրինակում են նրան: Դասն անցնում է teaching talking time (TTT) սկզբունքով, այսինքն՝ դասի ընթացքում խոսում է միայն դասախոսը, և, փաստորեն, սահմանափակվում է

ուսանողի ստեղծագործական կարողությունների դրսևորումը, ուսանող–ուսանող փոխազդեցությունը:

Հաղորդակցական մեթոդ (The communicative method): Այս մեթոդի հեղինակները հիմնական և առաջնային նպատակ են համարում ուսանողների հաղորդակցական հմտությունների զարգացումը:

Դասի ընթացքում հաղորդակցական մեթոդի կիրառմամբ ուսանողներին պատրաստում են միմյանց հետ հաղորդակցման:

Ուսանողները պետք է ունենան տարբեր քերականական կանոնների, լեզվաբանական երևույթների վերաբերյալ գիտելիքներ, որպեսզի կարողանան դրանք ճիշտ կիրառել համապատասխան իրավիճակում:

Այս մեթոդով անցկացվող դասի ընթացքում ուսանողները հիմնականում խաղեր են խաղում, նկարներ նկարագրում, համապատասխանեցնում նկարը տեքստին, կազմում երկխոսություններ: Դասախոսը հանդես է գալիս որպես օժանդակող և խորհրդատու: Հաղորդակցական մեթոդի հիմնական սկզբունքը ուսանողների՝ օտար լեզու սովորելու շահադրդվածությունն է: Ուսանողները նաև հնարավորություն ունեն արտահայտելու սեփական կարծիքը: Սա օգնում է նրանց օտար լեզուն ըմբռնել և ընկալել՝ զգացական առումով առավել ապահով զգալով իրենց²:

Մեթոդների արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար հարցում է անցկացվել «Գլոբալ Բրիջ» միջազգային դպրոցում աշխատող ութ անգլերենի մասնագետների շրջանում՝ պարզելու, թե որ մեթոդներն են հիմնականում կիրառում նրանք՝ անգլերենի դասավանդման ընթացքում: Հարցման արդյունքում պարզվել է, որ որոշակի մեթոդի կիրառելիությունը կախված է լսարանի պահանջներից և նպատակներից: Սա, իր հերթին, հանգեցնում է զանազան, հաճախ միմյանցից խիստ տարբերվող մեթոդների օգտագործման, որոնց ուսուցիչը դիմում է՝ հաշվի առնելով լսարանի լեզվի իմացության մակարդակն ու պահանջները: Պարզվել է նաև, որ հարցմանը մասնակցածների շրջանում առավել կիրառվող են քերականաթարգմանական և հաղորդակցական մեթոդները:

Մասնագետներից 5-ի կարծիքով՝ քերականաթարգմանական մեթոդի կիրառումը լայն տարածում ունի հատկապես հայալեզու լսարաններում, որը բացատրվում է հայոց լեզվի հարուստ քերականական համակարգով: Տվյալ մեթոդով դասավանդումը ուղեկցվում է զուգադրական համեմատությամբ, քանի որ ուսանողները հեշտությամբ կարողանում են գտնել քերականական համարժեքը մայրենի լեզվում, ինչն էլ նպաստում է նյութի առավել խորն ու հիմնովին ըմբռնմանը: Քննարկվող մեթոդը գործադրվում է լեզվական տարբեր նյութերի ներկայացման ժամանակ, քանի որ հայոց լեզվի քերականական կառուցվածքը թույլ է տալիս ուսումնասիրել լեզուն վերլուծական, շարահյուսական և այլ ձևաչափերով:

Դասավանդողները նշում են նաև որոշ թերություններ՝ կապված այս մեթոդի կիրառման հետ, օրինակ՝ անգլերենի որոշ ժամանակաձևերի կազմությունը (Present Perfect Continuous), ինչպես նաև կրավորական սեռի կառույցը: Եթե անգլերենում կրավորական սեռի կառույցն ընդգծում է խոսքի լակոնիզմը, հայերենում առավել կիրառելի են ներգործական կառույցն ու անենթակա նախադասությունները:

² Տե՛ս Littlewood William, Communicative Language Teaching. Cambridge: Cambridge University Press, 1981:

Հարցմանը մասնակցած 6 մասնագետների առավել գործածվող մյուս մեթոդը համարում են հաղորդակցականը, որը լայնորեն օգտագործվում է բանավոր խոսքի զարգացման նպատակով: Այս պարագայում գործում է «փորձով ձեռք բերված հմտության» (Practice makes perfect) սկզբունքը: Նշված մեթոդի կիրառման ժամանակ ուսանողներին ներկայացվում են քերականական կառույցներ, ապա ուսանողները հաղորդակցվելու, երկխոսելու, ինչպես նաև զուգադրման միջոցով ձեռք են բերում կայուն պատկերացում օտար լեզվի քերականական այս կամ այն երևույթի վերաբերյալ:

Այս մեթոդի թերություններից կարող է համարվել ուսանողների՝ միմյանց սխալն ընդօրինակելու վտանգը, որի կանխման պատասխանատվությունն ընկնում է դասախոսի վրա:

Մեր կարծիքով՝ մեթոդի ընտրությունը կախված է լսարանի պատրաստվածությունից, դասի նպատակներից և ուսուցանվող նյութի առանձնահատկություններից: Հարկ է նշել, որ դասի ընթացքում հնարավոր չէ կիրառել բացառապես այս կամ այն մեթոդը, կարելի է դրանք զուգակցել՝ ելնելով կատարվող աշխատանքի տեսակից: Ընդհանուր առմամբ, ճիշտ ենք համարում տարբերակված մոտեցումը, որը ենթադրում է մեթոդների նպատակային ընտրություն:

Օգտագործված գրականություն

1. Աստվածատրյան Ս., Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Եր., «Լույս», 1985:
2. Applied Linguistics Guide Book, Oxford. (Oxford Introduction to Language Study), Oxford University Press, 2003.
3. Brown H., Principles of Language Learning and Teaching, (fourth edition), Longman, 2000.
4. Larsen-Freeman D., Anderson M., Techniques and Principles in Language Teaching, Oxford University press, The United Kingdom, 1986.
5. Jack C. Richards and Theodore S. Rodgers, Approaches and Methods in Language Teaching, Cambridge University Press, The United Kingdom, 2016.
6. Kelly L. G., 25 Centuries of Language Teaching, Rowely, Mass: Newbury House, 1969.
7. Howatt A. P. R., A History of English Language Teaching, Oxford: Oxford University press, 1984.
8. Littlewood W., Communicative Language Teaching. Cambridge: Cambridge University Press, 1981.
9. Krashen S., Principles and Practice in Second Language Acquisition, Pergamon, Oxford, 1987.
10. Richards Jack C. and Renandya Willy A., Methodology in Language Teaching, Cambridge University Press, 2002.

СУСАННА ЧАЛАБЯН

*Заведующая кафедрой языков в АГЭУ,
кандидат филологических наук, доцент*

КАРИНА СОГОМОНЯН

Преподаватель Французского колледжа в Армении

Использование традиционных и инновационных методов в процессе обучения иностранным языкам.–

В статье представлены традиционные методы обучения иностранным языкам, такие как грамматико-переводный метод, прямой метод, аудио-лингвальный и т.д. В статье рассматриваются также новейшие подходы и методы обучения.

Ключевые слова: *грамматико-переводный метод, инновационный метод, традиционный метод, коммуникативный метод.*

JEL: Y30, Y50, Y70, Z11

SUSANNA CHALABYAN

*Head of the Chair of Languages at ASUE,
PhD in Philology, Associate Professor*

KARINA SOGHOMONYAN

Teacher at French College in Armenia

The Use of Traditional and Innovative Methods in the Process of Teaching Foreign Languages.–

The article presents traditional methods of teaching foreign languages such as grammar-translation method, direct method, audio-lingual method, etc. and their use in the teaching process. Some innovative methods and teaching approaches are also considered in the given paper.

Key words: *grammar-translation method, direct method, audio-lingual method, innovative method, communicative method.*

JEL: Y30, Y50, Y70, Z11